



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

ք. Երևան, Ահարոնյան 12/3, Հեռ. 060 544 988
Էլ հասցե՝ trainingcenter@taxservice.am

**2013 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում «ՀՀ ԿԱ ՊԵԿ
ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ
հաշվետվություն:**

1. Հարկային և մաքսային մարմիններում ծառայողների համար դասընթացների կազմակերպում

2013թ հունվար-դեկտեմբեր ամիսներին «ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել են ընդհանուր առմամբ 1432 ակ/ժամ տևողությամբ դասընթացներ, որոնց մասնակցել են 3921 ծառայողներ (2756 հարկային և 1165 մաքսային): Ելնելով որոշ դասընթացների բնույթից և մասնակիցների ընդգրկման առանձնահատկություններից՝ Ուսումնական կենտրոնը այդպիսի դասընթացները կազմակերպել է դրսեկության ձևով՝ հարկային (տարածքային) տեսչություններում և մաքսատներում (մաքսակետերում):

2. Հարկային և մաքսային մարմիններում ծառայողների համար միջազգային մասնագետների հետ համատեղ սեմինար-քննարկումների կազմակերպում

2013թ հունվար-դեկտեմբեր ամիսներին միջազգային մասնագետների հետ համատեղ Ուսումնական կենտրոնը կազմակերպել է ընդհանուր առմամբ 38 ակ/ժամ տևողությամբ սեմինար-քննարկումներ, որոնց մասնակցել են 384 ծառայողներ (144 հարկային և 240 մաքսային): Սեմինար-քննարկումները վերաբերել են տնտեսության առանձին ոլորտային ուղղություններին, դրանց հարկման առանձնահատկություններին, ինչպես նաև միջազգային փորձին:

3. Ուսումնական միջոցառումների կազմակերպում պետական այլ մարմինների աշխատակիցների համար

Կենտրոնը պետական այլ մարմինների հետ համատեղ՝ մասնավորապես՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ Բնապահպանության նախարարության, ՄԱԿ հայաստանյան գրասենյակի, ՀՀ Փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի, Մտավոր սեփականության գործակալության և փորձագետների ներգրավմամբ, 2013թ-ի ընթացքում կազմակերպել է թվով 8 ուսումնական միջոցառում: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության համապատասխան որոշումները՝ Ուսումնական կենտրոնը, «Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամի հետ համագործակցելով, կազմակերպել է դասընթացներ պետական այլ մարմինների (ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ Մշակույթի նախարարություն, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա) ծառայողների համար: Դասընթացների

տևողությունը ընդհանուր առմամբ կազմել է 31 ակ/ ժամ (դասընթաց), որոնց մասնակցել են 326 աշխատակիցներ:

4. Ուսումնական միջոցառումների կազմակերպում հարկ վճարողների համար

Հաշվի առնելով հարկ վճարողների առաջարկությունները՝ Ուսումնական կենտրոնը հարկ վճարողների համար կազմակերպել է դասընթացներ, որոնք դասավանդել են ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի համապատասխան մասնագետները և Ուսումնական կենտրոնի դասախոսները: Դասընթացների ընթացքում հարկ վճարողներին է բաժանվել տվյալ դասընթացին վերաբերող կամ հարկային օրենսդրություն պարունակող գրականություն: Դասընթացների ընդհանուր տևողությունը կազմել է 153 ակ/ժամ, որոնց մասնակցել է ավելի քան 418 մասնակից:

5. «Աջակցություն մարզերի ՓՄՁ-ներին» ծրագրի շրջանակներում տարածքային հարկային տեսչություններում հարկ վճարողների համար Ուսումնական միջոցառումների կազմակերպում

Հաշվի առնելով մարզերի ՓՄՁ-ների համար հարկային օրենսդրության վերաբերյալ դասընթացների կազմակերպման անհրաժեշտությունը՝ Ուսումնական կենտրոնը 2013թ-ի նոյեմբերից սկսել է «Աջակցություն մարզերի ՓՄՁ-ներին» ծրագիրը, որի շրջանակներում Եղեգնաձորի և Էջմիածնի ՏՀՏ-ներում հաշվառված հարկ վճարողների համար տեղերում կազմակերպվել են անվճար դասընթացներ: Դասընթացներին մասնակցել են շուրջ 90 հարկ վճարողներ, որոնց տրամադրվել է հարկային օրենսդրության վերաբերյալ գրականություն:

6. Միջազգային համագործակցություն

Միջազգային համագործակցության շրջանակներում ուսումնական միջոցառումներ են կազմակերպվել Համաշխարհային մաքսային կազմակերպության, Լիտվայի մաքսային ծառայության ուսումնական կենտրոնի համապատասխան փորձագետների ընդգրկմամբ: «Աջակցություն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին մաքսային հսկողության բարելավված ընթացակարգեր մշակելու և իրականացնելու գործում» TWINNING ծրագրի շրջանակներում անց է կացվել 15 աշխատաժողով:

7. Այլ ուսումնական հաստատությունների հետ համագործակցություն

2013 թվականի հոկտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրամի միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր, որը հիմք կհանդիսանա համատեղ իրականացնել ուսումնական ծրագրեր, գիտահետազոտական աշխատանքներ, գիտաժողովներ և կոնֆերանսներ: Միաժամանակ հուշագրով ամրագրվել են համագործակցության հետևյալ ուսումնական ծրագրերի ուղղությամբ՝

- Հարկային քաղաքականություն և վարչարարություն,
- Մաքսային քաղաքականություն և վարչարարություն,
- Բիզնեսի կառավարում,
- Տնտեսագիտություն,

- Գործառնությունների և համակարգերի կառավարում (IESM),
- Համակարգիչներ և տեղեկատվական տեխնոլոգիաներ
- Բնապահպանական հարկաբյուջետային և հարկային պարտավորություններ:

Հուշագիրը ենթադրում է նաև ուսումնական ծրագրերում ընդգրկված դասախոսներին միջազգային հեղինակավոր գիտակրթական կենտրոններում շարունակական վերապատրաստման ապահովումը:

8. Տպագրական աշխատանքներ

Ուսումնական կենտրոնի կողմից ընթացիկ տարում հրատարակվել է՝

- «Հարկեր, տուրքեր և վճարներ» երկհատորյա ժողովածուն,
- «ԱՊՀ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» տեղեկատուն,
- «Եկամտային հարկ» նորմատիվ ակտերի ամփոփ ժողովածուն,
- «2013թ. հարկային և մաքսային մարմինների առաջնահերթ խնդիրներ և միջոցառումներ» ուղեցույցը,
- «Հարկատու» և «Մաքսատուն» ամսագրերը,
- «Հայերեն-ռուսերեն-անգլերեն» զրուցարանը՝ նախատեսված մաքսակետերի մաքսային ծառայողների համար:

Ուսումնական կենտրոնի կողմից տպագրվել են նաև ինչպես հարկային և մաքսային ծառայողների, այնպես էլ հարկ վճարողների համար անհրաժեշտ բրոշյուրներ, ուղեցույցներ և այլ նյութեր:

Ուսումնական կենտրոնը մասնակցել է նաև պետական մարմինների տպագրական կարիքների համար անցկացվող թվով 20 մրցույթների, որոնցից 7-ում ճանաչվել է հաղթող և պատշաճ իրականացրել տպագրական աշխատանքները:

2014թ. Համաշխարհային բանկի միջոցների հաշվին նախատեսվում է վերազինել Կենտրոնի հրատարակչական մասը սարքավորումներով, որը հնարավորություն կտա էապես բարձրացնել տպագրական կարողությունները և համապատասխան որակական ցուցանիշները: